

ՄԵԾ ՅՈՒԲԵԼԵԱՆԻ ՀԱՆԴԵՍՆԵՐԸ



Հ Ա Ճ Ը Ն Ի Մ Է Զ

ՀԱՃՐՆ, 15 հոկտեմբեր, 1913

Մեծ Յորելեանը այստեղ կատարուեցաւ մեծ շուքով և արժանաւժաւ և հանդիսաւորութեամբ: Առաջն. փոխանորդ Տ. Վահան քհ. Մանուկեանի նախագահութեան և Յարութիւն ԼՔ. Թէրզեանի ատենապետութեան տակ զէտնուող մասնախումբ մը կանուխէն պատրաստութիւններ տեսած էր այս մասին: Հանդէսները սկսան հոկտ. 11ին, Ուրբաթ, կէսօրէն վերջ, երբ քաղաքիս երեք Հայ եկեղեցիներուն, Ս. Յակոբ վանքին, ինչպէս նաեւ Հայ-Բողոքականաց ժողովարանին զանգակները սկսան անընդհատ հնչել ամբողջ ժամ մը, ժողովուրդը հրաւիրելով եկեղեցի, ուր աւուր պատշաճի պաշտամունք տեղի ունեցաւ:

Գիշերը մինչեւ աստու լուսավառութիւն տեղի ունեցաւ և զանգակները շարունակեցին հնչել: Շաբաթ օր բոլոր խանութները զոցուած էին, իյարդանս Մեծ Տճին: Իրիկունը ժամը Յուկէսին Ս. Աստուածածին եկեղեցւոյն մէջ զարձեւալ հանդէս կատարուեցաւ, ի ներկայութեան Հայ-Բողոքականներու, որոնք մեծ խանդավառութիւն ցոյց կուտային: Շաբաթ գիշեր վանքը և Հայ երեւելիներու տունները լուսազարդուեցան: Իրիկուան Ս. Գէորգի կեդր. վարժարանին մէջ տեղի ունեցաւ հանդէս, որուն միջոցին ազգային երգեր երգուեցան, բանաստեղծութիւններ կատարուեցան, և թատերգութիւններ ներկայացուեցան:

Գիշերը մեծահանդէս թափօրով փառալուք ջահազնացութիւն մը տեղի ունեցաւ: Ժողովուրդը ըստ տեղական սովորութեան, մաշայաններով անցաւ գլխաւոր փողոցներէն՝ այցելելով եկեղեցիներն ու ազգային հաստատութիւնները:

Կիրակի առաւօտ Առաջն. փոխանորդը հանդիսաւոր պատարագ մատուց. եկեղեցական արարողութիւններէն վերջ Ս. Գէորգի մէջ զարձեւալ հանդէս տեղի ունեցաւ, իրիկունը նորէն լուսավառութիւն: Բողոքականները կ'ըսէին թէ իրենք պարծանքով կը մասնակցին այս հանդէսներուն: